

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 46/4

13 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց Երևանի քաղաքապետի տեղակալի 14.10.2015 թ-ի գրությամբ բերված գանգատը:

Երևանի քաղաքապետի տեղակալի գանգատում բերված փաստարկները.

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով (մինչև 21.06.2014թ. ՀՕ-67-Ն ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը) սահմանված կարգով և «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում Երևանի քաղաքապետարանի կողմից պատշաճ ձևով յուրաքանչյուր ամիս պարտադիր կուտակային ֆոնդի 900008047020 հաշվեհամարին փոխանցվել են պարտադիր կուտակային վճարի գումարները:

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում 21.06.2014թ. ՀՕ-67-Ն ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 01.07.2014թ.) կատարված փոփոխությունների արդյունքում պարտադիր կուտակային վճարը վերանվանվել է սոցիալական վճարի:

Իրազեկված չլինելով սոցիալական վճարի հաշվեհամարին վերը նշված օրենքների պահանջը կատարելու նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից հուլիս ամսվա աշխատավարձից և պարգևավճարից պահվել ու հուլիս-օգոստոս ամիսներին 900008047020 հաշվեհամարին փոխանցվել է 9545247 դրամ սոցիալական վճարի գումարը:

Հաշվի փոփոխության իրազեկումը Երևանի քաղաքապետարանը ստացել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային տարբերակով 12.08.2014թ. և նույն օրը՝ 12.08.2014թ. հ.02/09-8805 գրությամբ Երևանի քաղաքապետարանը դիմել է ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետին 9545247 դրամը սոցիալական վճարների 900005000170 հաշվին վերաձևակերպելու համար, սակայն Երևանի քաղաքապետարանի նշված գրությունը մնացել է անհետևանք:

ՀՀ ֆինանսների նախարարի 24.10.2014թ. հ.733-Ն հրամանով սահմանված կարգի համաձայն 03.02.2015թ. Երևանի քաղաքապետարանը դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն պարտադիր կուտակային վճարի գերավճարի գումարի մնացորդը վերադարձնելու համար, որը նույնպես մնացել է անհետևանք:

Երևանի քաղաքապետարանը 24.03.2015թ. հ.02/9-4623 գրությամբ կրկին անգամ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետին, որից հետո միայն վերաձևակերպումը կատարվել է 01.04.2015թ. 36318839 դրամի չափով, որը ներառում է 2014թ. ապրիլ-հունիս ամիսների վճարված կուտակային վճարը և հուլիս ամսվա 9545247 դրամ սոցիալական վճարը:

Վերաձևակերպումը կատարելուց հետո փոխադարձ հաշիվների ստուգումից պարզվել է, որ 2014թ. հուլիս ամսվա սոցիալական վճարների համար հաշվարկվել է տույժ 1026100 դրամով (9545247 դրամից), որը նվազեցվել է 26665522 դրամ գերավճարից:

Երևանի քաղաքապետարանը 03.06.2015թ. հ.01/09-9143 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն հաշվարկները վերանայելու և տույժերը հանելու համար:

Կրկին անգամ 11.08.2015թ. հ.01/9-39255 գրությամբ Երևանի քաղաքապետարանը դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ տույժերը վերանայելու խնդրանքով:

ՀՀ ֆինանսների նախարարության սկզբնական շրջանում անգործությամբ (Երևանի քաղաքապետարանի 12.08.2014թ. հ.02/09-8805 գրությանը ընթացք չտալու), իսկ հետագայում գործողությամբ (տույժի հաշվարկմամբ և պահմամբ) Երևանի քաղաքապետարանին պատճառվել է վնաս 1026100 դրամի չափով՝ հետևյալ պատճառաբանությամբ:

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գործատուները «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում էլեկտրոնային եղանակով հարկային մարմին են ներկայացնում անձնավորված հաշվարկ: Նշված օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սոցիալական վճար կատարելու պարտավորություն ունեցող անձինք պատասխանատվություն են կրում սոցիալական վճարները չկատարելու կամ ուշացումով կատարելու համար:

Սոցիալական վճարը սահմանված ժամկետում չկատարելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար մասնակիցը (նրա համար սոցիալական վճար կատարելու պարտականություն ունեցող անձը հարկային գործակալը) վճարում է տույժ ժամանակին չմուծված սոցիալական վճարի գումարի 0.15 տոկոսի չափով:

Նշված մասով նախատեսված տույժը կիրառվում է ժամանակին չմուծված սոցիալական վճարի գումարների նկատմամբ կետանցման ամբողջ ժամանակահատվածի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գործատուները պարտավոր են սոցիալական վճարները կատարել յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ:

Ինչպես նշել ենք, Երևանի քաղաքապետարանի կողմից հուլիս ամսվա աշխատավարձից և պարգևավճարից պահվել ու հուլիս-օգոստոս ամիսներին 900008047020 հաշվեհամարին փոխանցվել է 9545247 դրամ սոցիալական վճարի գումարը: Ուստի, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի պահանջները բովանդակային առումով կատարվել են ՀՀ պետական բյուջե փոխանցվել է սոցիալական վճարի գումարը 9545247 դրամի չափով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Երևանի քաղաքապետարանի կողմից սոցիալական վճար կատարելու պարտավորությունը պատշաճ կատարվել է՝ ՀՀ պետական բյուջե փոխանցվել է նշված վճարը:

Եթե անգամ ՀՀ ֆինանսների նախարարության կարծիքով սոցիալական վճար կատարելու պարտավորությունը խախտվել է, ապա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի

առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Արդեն նշել ենք, որ սոցիալական վճար կատարելու պարտավորությունը բովանդակային առումով կատարվել է և գումարը փոխանցվել է 900008047020 հաշվեհամարին սոցիալական վճարի հաշվեհամարին իրազեկ չլինելու հետևանքով և Երևանի քաղաքապետարանը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ սոցիալական վճարի հաշվեհամարի մասին իրազեկումը ստանալուց հետո 9545247 ՀՀ դրամը 900008047020 հաշվից 900005000170 հաշվին վերաձևակերպելու համար, սակայն այն չի վերաձևակերպվել ոչ Երևանի քաղաքապետարանի մեղքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն վնասներ են իրավունքը խախտված անձի գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս):

Ավելորդ չէ նշել, որ պարտադիր կուտակային վճարը կամ սոցիալական վճարը չեն համարվում պետական հարկեր համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի ա/ կետի: Հետևաբար, համաձայն չենք ՀՀ ֆինանսների նախարարության 24.08.2015թ. հ. 03/3-1/22998-15 գրությամբ արտահայտած այն դիրքորոշմանը, որ 01.01.2014թ. մինչև 01.07.2014թ. ընկած ժամանակահատվածի համար պարտադիր կուտակային վճարների համար բացված հաշիվներին կատարված վճարումների մասով գերավճարները հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման ենթակա չեն:

Այսպիսով, ՀՀ ֆինանսների նախարարության՝ սկզբնական շրջանում անգործությամբ (Երևանի քաղաքապետարանի 12.08.2014թ. հ.02/09-8805 գրությանը ընթացք չտալու), իսկ հետագայում գործողությամբ (տույժի հաշվարկմամբ) Երևանի քաղաքապետարանին պատճառվել է իրական վնաս 1026100 դրամի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է քննության առարկա դարձնել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվարկած և սոցիալական վճարների հաշվին առկա գերավճարների գումարից պահված 1026100 դրամը Երևանի քաղաքապետարանին վերադարձնելու հարցը՝ այն փոխանցելով 900005000170 հաշվին:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Երևանի քաղաքապետարանը 2014 թ-ի հուլիս ամսվա սոցիալական վճարի գումարը՝ 9,545,247 դրամի չափով, մինչև Կենտրոնի ՀՏ-ի կողմից սոցիալական վճարի համար բացված նոր հաշվեհամարի մասին իրազեկվելը, փոխանցել է կուտակային վճարի թիվ 900008047020 հաշվեհամարին:

Իրազեկման օրը՝ 12.08.2014 թ-ին, քաղաքապետարանը դիմել է ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետին՝ կուտակային վճարի հաշվեհամարին փոխանցված վերոնշյալ գումարը սոցիալական վճարի թիվ 900005000170 հաշվեհամարին վերաձևակերպելու համար, որը, սակայն, չի կատարվել՝ համապատասխան կարգի բացակայության պատճառով:

03.02.2015 թ-ին Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարի 24.10.2014 թ-ի N 733-Ն հրամանով (ուժի մեջ է մտել 11.12.2014 թ-ին) սահմանված կարգով դիմել է Կենտրոնի ՀՏ՝ կուտակային վճարի 36,318,839 դրամ գերավճարի (այդ թվում՝ 26,665,522 դրամը նշված հրամանով սահմանված կարգով կատարված կուտակային վճարի վերահաշվարկի արդյունքում առաջացած) վերադարձի համար, որը մնացել է անհետևանք:

Այնուհետև Երևանի քաղաքապետարանը 24.03.2015 թ-ի գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետին՝ կուտակային վճարի գծով գերավճարը սոցիալական վճարի հաշվին վերաձևակերպելու համար: Համապատասխան վերաձևակերպումը կատարվել է 01.04.2015 թ-ին:

Կենտրոնի ՀՏ-ի 26.05.2015 թ-ի գրությամբ ներկայացված հարկային պարտավորությունների փոխադարձ հաշվարկների տեղեկանքով պարզվել է, որ 2014 թ-ի հուլիս ամսվա սոցիալական վճարի նկատմամբ հաշվարկվել է տույժ՝ 1,026,100 դրամի չափով, որը Կենտրոնի ՀՏ կողմից նվազեցվել է կուտակային վճարի 26,665,522 դրամ գերավճարի գումարից: Այս մասին կողմին տեղեկացվել է Կենտրոնի ՀՏ-ի 26.05.2015 թ-ի N 4120/5 գրությամբ:

Երևանի քաղաքապետարանը 03.06.2015 թ-ի և 11.08.2015 թ-ի գրություններով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն վերոնշյալ տույժերը վերահաշվարկելու խնդրանքով, որոնց ի պատասխան՝ տեղեկացվել է, որ կուտակային վճարի վերադարձման ենթակա գերավճարը սոցիալական վճարի հաշվին վերաձևակերպելու դեպքում սոցիալական վճարի ԱՀԲ-ում վերադարձ վերաձևակերպումը կատարվում է վերաձևակերպման օրով և ժամկետանց սոցիալական վճարի նկատմամբ հաշվարկված տույժերը վերահաշվարկման ենթակա չեն:

Քննարկվող դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ Երևանի քաղաքապետարանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և չափով փոխանցել է 2014 թ-ի հուլիս ամսվա աշխատավարձի միջոցներից գոյացած սոցիալական վճարը՝ գումարով 9545247 դրամ: Պարզապես, սոցիալական վճարի գծով 9545247 դրամ գումարը սխալ հաշվեհամարին է փոխանցվել հաշվեհամարի փոփոխության մասին ժամանակին իրազեկված չլինելու պատճառով: Ընդ որում, իրազեկվելու նույն օրը՝ 12.08.2014 թ-ին, Երևանի քաղաքապետարանը գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ-գլխավոր գանձապետին սխալ հաշվեհամարին վճարված սոցիալական վճարների գումարը վերաձևակերպելու համար: Սակայն, համապատասխան կարգի բացակայության պատճառով վերաձևակերպումը չի կատարվել: Այսինքն, հաշվեհամարի փոփոխության մասին տեղեկանալուց անմիջապես հետո Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվել են անհրաժեշտ բոլոր գործողությունները հարցին լուծում տալու ուղղությամբ, որոնք, սակայն, եղել են ապարդյուն:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում Երևանի քաղաքապետարանը, ըստ էության, իր վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարել է՝ սահմանված ժամկետում ՀՀ պետական բյուջե փոխանցել է 2014 թ-ի հուլիս ամսվա սոցիալական վճարի գումարը, իսկ նշված գումրը համապատասխան հաշվեհամարին չփոխանցելը պայմանավորված է եղել ժամանակին չիրազեկվելու հանգամանքով:

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը եզրակացնում է, որ քննարկվող դեպքում կիրառելի են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթները, որի արդյունքում 9.545.247 դրամ սոցիալական վճարի նկատմամբ հաշվարկված տույժը՝ գումարով 1.026.100 դրամ, ենթակա է վերաձևակերպման փաստացի վճարման օրով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

Երևանի քաղաքապետի տեղակալի 14.10.2015 թ-ի գրությամբ բերված գանգառը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ